




ՔԱՆՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԹԻՒՆ

ՄԻՍՏԵՆԻ ԵՄԵՆՆԵՆԻ ԼՍՄՍՐ

Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԼՍՄՍՐ

Տարեկան	10	Փրանք
Բաժանորդագրին	ԿԱՆՈՒՆ ԿՆԱՐԻԼԻ	



ՀԱՍՏԵ

To the DICKRIS PUBLISHING COMPANY
301 East 34th St., New York City.

Entered at the Post Office at New York as
Second-Class Mail Matter.

Խմբագրութեան ղրկուած ծրար
կամ նամակ եւ չեն ղրկուիր:

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ք. ՏԱՐԻ, ԹԻՒՆ 86 ՆՈՒՆ 15 1899 ԳԻՆ 3 ԱՆՆԹ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Հրեշտակ կինը.— Կառավարութեան և կառավարողները.— Գլխի և արասուք (նոստալոր).— Բաղաճական.— Ազգային.— Պատասխան մը.— Թղթակցութիւններ.— Բաց նամակ.— Յայտարարութիւն մը:

ՀՐԵՇՏԱԿ ԿԻՆԸ

Ահագին ցամաք երկիրներով ու լեռներով բաժնուած ծովեր իրարու կը միանան մարդկային հանճարի եւ մեծագործութեան միջոցով: Երբ Սուէզի պարանոցը վերջնականապէս բացուեցաւ, հոն Կարմիր եւ Սիւրբիկ-րական ծովերը իրենց առաջին գըրկախառնումին մէջ մարդուն հրաշագործութիւնը փառաբանեցին սրտաւրէտ, այսպէս ալ ինկած և ստորնացած մարդկութիւնը դիւցազուններու և հրեշտակներու դասին միացուող մեծ ու պաշտելի հոգիներ:

Այսօր աշխարհը աչքը հիացումով յայտնէ մի սերունդը, լքեցեալ և դժբաղդ կնոջ վրայ, որուն վէճ հոգիին առջև խոնարհած են զինք և իւր ամուսինը թշնամանող հզոր կառավարութիւն մը, հսկայ բանակ մը, իշխանազուններ եւ մոլորանդ խոտեր: Լրագրութիւնը լուսնոյն տառերով անոր գլխուն պսակ դրաւ «Հրեշտակ կինը» փառապանք տիրողը: Տիկին Տրէյֆելը է այն:

Տիկին Տրէյֆելը դարուս բոլոր հաւատարիմ և անձնուր կիններուն թագուհին է, վստահ վստահութեամբ իրաւոր իրականութեան մարմնացումն է նա:

Անկէ հինգ տարի առաջ հարկարաւոր Տրէյֆելը գոհ զնաց պատմութեան էն անխղճ զրպարտութիւններուն և էն ամօթալի դաւադրութիւններուն: Գաղղիական բանակը և կառավարութիւնը զանի իրը հայրենեաց դաւաճան դատապարտեցին ցամաք աքսորանքի դեւերու կըզղին մէջ. ատելութեան և նողկանքի զայրագին ցասումով մը ամբողջ Գաղղիական ազգը լուսանք կը տեղար անոր վրայ, ոչ ոք կը համարձակէր անոր ի պաշտպանութիւն բառ մը իսկ արտասանել: Իր անմեղութեանը գիտակից բարեկամներն անգամ լքեցին զինք և իրենց լուսնոյնով միացան այդ մէկ մարդուն դէմ զինուած ամբողջ ազգին: «Իսաւաճան» էր Տրէյֆելը, պաշտպան չունէր, պատիւ չունէր, կեանք չունէր. կենդանուն թողուած էր այն երկաթեայ վանդակին մէջ ծանր շղթաներու տակ: Տանդէի հռչակաւոր «Յոյս չկայ» կնքուած էր այդ վանդակին վրայ. այդ անտէր զոհը յաւիանական մոտացման մատնուած էր. սակայն փափկասուն կին մը կար որ Պողոսի և Շիլայի բանաբ այցելող հրեշտակին նման իւր վստահ հոգեկող կը սաւառնէր հոն. հրաշքի էակին պէս նա կը ձգտէր փրկել վանդակը

և շղթաները: Տրէյֆելը անձնուէր ամուսինն էր: Նա իւր ամուսնոյն անմեղութեան գիտակցութիւնով զինուած և առ այն ունեցած անձնուէր սիրովը վառուած՝ զայն ազատելու գերագոյն ճիգեր կը թափէր. ճշմարիտ սէրէն ծնանող հզոր հաւատքով մը գիշեր ցերեկ աշխատեցաւ, հնարաւոր և անհնար ամեն միջոց գործածեց, մինչև որ դարուս ամենափառաւոր յաղթանակը տարաւ, իւր ամուսնոյն ազատման և անոր թշնամիներուն անկման տիեզերահռչակ յաղթանակը:

Թող այս «Հրեշտակ կինը» խօսի մեր հայ կիններուն. թող իւր վստահները շնորհակալ ինքնուր կրեցանք, որոնք գիտնան այդպէս իրենց ամուսիններուն կենաց ամեն պարագաներուն մասնակից ըլլալ, անոնց հետ խայտան ուրախալի բաղդին պայծառ ճառագայթներուն տակ և անոնց հետ կրեն դժբաղդութեանց բոլոր լուծն ու բեռը. թող այդ կնոջանի օրինակէն ծագող ճշմարիտ սէրը՝ անձնուէր սրտեր ընծիւղէ հայ կիններու մէջ, որով իրենց ամուսիններուն վրայ եկած բոլոր անիրաւ նախատինքներուն, թշնամութիւններուն, աղէտներուն ու փորձանքներուն դէմ անոնց անբաժան դաշնակիցները ըլլան. թող հայ կիններուն համար ալ ճշմարիտ ըլլայ այն խօսքը թէ «Շատ ջուրերը սէրը շեն կրնար մարել»: Տիկին Տրէյֆելը յաջող օրերու մէջ փայլալուստ սէրը արեւի մը պէս բոցավառեցաւ երբ իւր ամուսնոյն կենդանի կմախքը կը փշուէր ամէնող ազգին մոլորութեանը տակ: Ահա հոս է ամուսնութեան սրբութիւնը, հոս է ամուսնութեան վեհութիւնը: Ո՛հ, որչափ շատուոր են այն կարգ մը շլխաի կինները որ իրենց էրկը հինցած լաթի մը պէս մէկը ինտեղու պատրաստ են երբ անոր վրայ արատ մը իյնայ, պատուաճաք մը բացուի, երբ նա ձախողութիւններու ենթակայ ու թշնամութիւններու նշաւակ դառնայ. ո՛րք են հրեշտակ կինները՝ որոնք իրենց կոշման համաձայն իրենց ամուսիններուն զօրավիգ ըլլալու, իւրախութիւն ըլլալու, փրկիչ ըլլալու դերը կըստանանք գիւցազնաբար: Քանի՞ կին կրնանք գտնել որոնք իրենց ամուսնոյն կիսամեռ դիակը այնքան խանդավառումով կը զրկեն՝ որքան զրկեցին զայն իւր վարդաքեղ օրերուն մէջ, որոնք իրենց համբոյրները այնքան սիրալիմ կուտան իրենց ամուսիններու շղթայներուն, որքան կը համբուրէին անոնց ազատ ու կորովի բազուկները, որոնք իրենց արցունքներով կը լուան և կը սրբեն այն բիծերը որ թշնամին նետած է իրենց ամուսիններուն վրայ. ի մի բան, որոնք իրենց հոգին ու կեանքը կապած են իրենց ամուսիններու հոգիին ու կեանքին, անակ որ մարմնոյն մէկ կէսին վրայ բացուած խոցերը կը բուժուին միւս կէսին առողջութիւնովը: Գ. Չիթճեան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՆԵՐԸ

«Տիգրիս»ը յարմար ատեն իւր էջերը կը բանայ մի խիստ կարեւոր խնդրի, որը Ամերիկայի Հայ մամուլը մինչև հիմա ուշագրութեան առնելու էր, այն է՝ այս երկրի օրէնքները, անոնց գործադրութիւնը եւ մեր մասնակցութիւնը:

Մենք, հայերս, վտարուած ենք այնպիսի երկրէ մը, ուր միապետին քաջաճոյքը կը կազմէ երկրին օրէնքը, ուր երկիրը ապրեցողն էրկրապետը, արհեստաւորը և վաճառականը սիրող օրինաց մէջ ձայն չունին, ուր թէ՛ անհատական և թէ՛ հասարակական իրաւունքները ուրացուած են. ուր դատարանը միայն դատել գիտէ՝ քիչ անգամ արդարութիւնը գործադրելու դիտումով. ուստի քանի որ մեզ վիճակուեցաւ ապրել Ռամիկաւարական երկրի մը մէջ, պարտինք ուսումնասիրել այս երկրի օրէնքներն, որոնք ժողովուրդէն կը շինուին՝ ժողովուրդին համար:

Ի՞նչ է կառավարութիւն — Թողմաս ֆէյն՝ այս երկրի հայրերէն մին կըսէ. «Կառավարութիւնը շարիք մի է, սակայն հարկաւոր շարիք մը»: Մարդիկ ընկերական ծնած են: Երբ անոնք մէկ մէկի քով կուգան իրարու օգնելու և մին միւսին պահապարկեցողութեամբ, հոն կառավարութեան պէտք չկայ. բայց երբ մարմնով ու մտքով զօրաւորները կըսկսին իրենց մէկ սկարներն անիրաւել, խաբել և հարստահարել, ահա այդ ատեն է որ ընկերութիւնը իր զօրաւորներէն անհատներ կընտրէ որ զիրենք կառավարէ. ահա այդ օրէն է որ կառավարութիւնը ծնունդ կառնէ:

Կառավարութիւնը իր նախնական ձևին մէջ արգելական է. անիրաւութիւններու արգելք հանդիսանալ. կառավարութեան բացասական դերն է այս, որոյ համեմատ կը վարուին հին աշխարհի գրեթէ բոլոր կառավարութիւնները. սակայն անոր դրական պաշտօնն ալ կայ, այն է՝ ընկերութեան արագ և առողջ զարգացմանը ամեն հարկաւոր միջոցներուն ձեռնարկել:

Միապետական դրութեան տակ օրէնքներու հաստատութեան և գործադրութեան մէջ միայն միապետն է որ ձայն ունի իր ստորադասեաններովը, հետևաբար օրէնքները այդ դասակարգին ինչպիսի կը լինին և կառավարողները կը պարտաւորուին հնազանդիլ օրէնքի մը, որուն մէջ ձայն կամ հանուսնութիւն չունին. այս բանը հակառակ է ազատութեան եւ բարոյական սկզբունքներու. մինչդեռ Ռամիկաւարական երկիրներու մէջ ամեն անհատ կը հպատակի օրէնքի մը որ իւր քուէովը սրբագործած է: Մարդը պարտաւորելու համար նախ անոր իրաւունքը իրեն տալու է:

պարտք և իրաւունք փոխադարձ են: Միապետը կըսէ. «Տուրքը վճարէ որ քեզ պաշտպանեմ». իսկ քուէովը ընտրուած պաշտօնեայն կըսէ. «Կը ծառայեմ քեզի՛ ուստի վճարէ ինձի»:

Եթէ մենք այս երկրին մէջ հետամուտ չըլլանք սովորելու երկրին հաստատուած օրէնքները, խնդրոյ տակ եղած օրէնքները և անոնց կիրառութեան ապահով միջոցները. եթէ իբրև մեր իրաւունքը և պարտքը ճանչցող քաղաքացիներ՝ մեր մասնակցութիւնը չունենանք այս երկրին աւելի լաւ ընթացքի մը մտնելուն մէջ, ինչո՞ւ հաւատամ թէ՛ այդ բաները պիտի ընենք երբ որ մենք մեր իսկական երկիրը ունենանք: Մենք ապագային մեր հայրենիքին օտակար քաղաքացիներ ըլլալու համար, պարտինք սկսիլ այդ մէկ մեր դատնուած տեղը օգտակար քաղաքացիներ ըլլալ: Նոյն իսկ մեր շահին ու փեսային համար սորվելու ենք մեզ կառավարող օրէնքները, որ գիտնանք ի՞նչ ատեն ինչ փեսայ խոտափելու և ի՞նչ պատեհութեան օգտուելու ենք:

Միացեալ Նահանգաց կառավարութեան օրէնագրական, դատական և գործադրական բաժիններուն վրայ Տիգրիսի մէջ պարբերաբար պիտի գրենք:

ՊԵՏՐՈՍ Ա. ԿԵՂԵՆԿԵԱՆ

ԺՊԻՏ ԵՒ ԱՐՏԱՍՈՒՔ

Նուէր առ Մեղունուշն Ե. Ս (Ռանտուֆ Բէնի)

Ժպիտն ըսաւ, արցունքին, Այտին վրայ սիրուհոյս Արեւն ինչպէս գարնային Փալիլի, շողայ, ցուլայ լոյս, Սիրուն արցունք, իրապէս Անսովոր է տեսնել մեզ, Սր մենք երկուքս հոս մէկտեղ կրնանք մընալ անարգել:

Շիտակ սրտէն է կուգամ, Հսաւ արցունքն դառնահամ. Ներմուծելու բալասան՝ Վիշտերն ընել ցիրուցան. Հիմա ըսաւ, ժպիտը, Ես կը փոխեմ այդ սիրտը, Քանի որ դուն սգաւոր Գարման տուիր խեղճ, անզօր:

Արցունքն ըսաւ, ժպիտին. ժպիտ, պարզ է ու մեկին, Որ մենք քոյր ենք երկուորեակ, Գորովն է մեր Բայր դայեակ. Որչափ սիրուն է այն դէմք Որ մենք մէկտեղ կը պնենք, Լոկ մէկու մը ցնծումին Համար և կամ դառն վշտին:

Թրգ. Անգ. ՏԵՐՏԻՍ

ՈՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՂԳ

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ գրաշարի դժուարութիւններս վերջացաւ և սակէ ետքը առանց ընդհատումի կարող կըլլանք Տիգրիսի հրատարակումը շարունակել:

ՆԱՄԱԿ ՊՐԱՅԹԸՆԵՆ

Յուլի 10 իսթ Ուօթըրթաուն Մասս. Պրայթնի ժողովուրդը ամենէն հաւատարիմ աւանդապահը եղած է իւր մայրենի եկեղեցւոյն, և էն (սեղծ) թշնամին ազգային շարժումներուն. հիմակ ալ այս վերջինի մասին ըզգաստացած կերեւայ:

Իսթ Ուօթըրթաունի Հնչ. մասնաճիւղը իւր հրապարակային անդրանիկ ժողովը ունեցաւ Պրայթընի մէջ, որ կեդրոնն է Քէյմպրիճի եւ ի. Ուօթըրթաունի հայ գաղթական նութեան:

Ժողովարանը լեցուած էր հայերով: Ատենապետը պ. Ա. Միլըրտընի համառօտ քաջաբերական մը կարողացէ վերջ ընձ հրաւիրեց Փ. Յ. Մ. յարգելի ատենախօսը ըսաւ. «առաջին անգամն է որ զուտ ազգային յեղափոխական ժողովի մը մէջ կը գտնուիմ և շատ ուրախ եմ». պատճառները տալէ վերջ՝ ցուցուց ճշմարիտ հայրենասէրի ճամբան, զըծեց անոր որոշ սահմանները, կրկնակի զօրութիւնը և յարաբերական լայն շրջանը: Ըսաւ. «Քրիստոնէութիւն և հայրենասիրութիւն սիրոյ կապով կը միանան. մեծ հայրենասէրն Յիսուս իսկ, իւր սրտին ամենէն աւելի մօտ կը պահէր իրենները, որ ըսաւ. «առաջ ինրայելի տան կիրսուած ոչխարներուն դասէք»: Ակնարկ մը նետեց նոր Հնչակեաններու զօրձունէութեան վրայ. դրուստեց զանոնք՝ իրենց մաքուր և որոշ ծրագրին, սուր և հեռատես նայուածքին համար. մանաւանդ փառաբանեց զանոնք որ գործին հետ որոշ բարոյականութիւն խառնած են. ըսաւ «ուրախութեամբ կը լսեմ թէ այս նոր կազմակերպութիւնը իրեն օրէնք ընտրած է (չմիացնել այն անհասարկ իրենց խոճքին հետ, որ մաքուր բարոյական շունի)»:

Երկրորդ ատենախօս պատ. Հ. Ալլէն ըսաւ. «Ինձ համար պատիւ կը սեպեմ այս ժողովին մէջ գտնուելս»: Ժողովողեան ուշադրութիւնը հրաւիրեց հայութեան այն մասին վրայ, բոց մէջ ինք ապրած է. նկատեց թէ վանը հայութեան կեդրոնը եղած է միշտ և կը մնայ, և ատոր համար է որ կարմիր Սուլթանը աւելի շատ իւր ուշադրութիւնը դարձուցած է վրայ քաջ բայց դժբաղդ ժողովողեան վրայ: Պատմեց իւր ստոյգ ազդեցիչ քաղած տեղեկութիւնը թէ ինչպէ՛ս անգամ մը Սուլթանը որոշ հրաման հանեց որ վանի լեռնագաւառները բնակող այն արի հայ տարրը տակաւ առ տակաւ ընտելնել ընեն. թէ ինչպէ՛ս այդ արի ծրագրին հետևանքով եկաւ Սասնոյ ջարդը, որ վերջին ընդհանուր օրհասը պիտի գուժէր:

Անցնելով կուսակցական խնդիրներուն ըսաւ. «Ես կուսակցութեանց ծրագրիները ուսումնասիրած չեմ և նպատակ ալ չունիմ. ես աւելի կը նայիմ կուսակցութեան մը դեկավարներուն քան ծրագրին: Ծատերը ամենէն լաւ օրէնքն և ծրագրին իսկ կրնան ոտնակախ ընեն: Զանազնք որ ձեր առաջնորդները ընտիր և անձնուէր մարդիկ ըլլան: Ես կուզեմ որ հերոսներ ելնեն ձեր ազգէն, և կըսպասեմ: (ծափ): Ամերիկայ կը պարծենայ Ուօթըրթընի, Լինքոլնի և կըրճենար պէս բարոյական մարդիկներով և ես կարօթեմ որ ձեր ազգէն ալ ելլեն դեղացաներ, քաղաքական աստաղները, մտքի դեկավարներ»: Բողբանելով կրօնքն և յեղափոխութիւնը ըսաւ. «Կրօնքը մայրն է յեղափոխութեան. լաւ հետեւեցէք կըրօնքին, որ լաւ յեղափոխականներ ըլլաք»:

Փ. Պ. Յակոբեան բէմ ելլելով

յիշատակեց մեր անցնալի յոյսերն ու յուսախաբուութիւններն. ըսաւ թէ՛ անցնալի արևուր փորձերէն դաս առած ըլլալով քիչ մը լրջացաւ:

Պ. Հայկունի ճառ մը կարդաց, որուն նպատակն էր ժողովողեան հասկցնել թէ՛ Հայ ժողովուրդը ինքն է իւր դատին դատախազը:

Հինգերորդ և վերջին ատենախօսը պ. Մայնէմէզեան նախ ուրախութիւն յայտնեց որ Ամերիկայի մը այսքան յարգանք և սէր կը տածէ առ մեր ժողովուրդ. պերճախօս լեզուով մը յիշատակեց հայութեան դարեւոր շարժարանքներն ու վրէտերը. յիշեց որոշ թուականներով վերջին քառօրէք դարուն մէջ հայոց համար եղած խստառններն ու խստամիտականութիւնները, բարեկարգութեան ծրագրիներն և անոնց վրձումը, պզտիկ յոյսերէ յետոյ մեծ յուսահատութիւնները, կարծ խանդավառութիւն յետոյ կրկար լքումները. ըսաւ թէ «սակայն այս ստակալի գաշալվի-ժուճներէն ետք՝ յարատե լանքը կը մնայ իւր փրկարար յոյս»:

Ժողովը փակուեցաւ պ. Ատենապետի շնորհակալութիւններով:

ՇԱԽԱՄԸ

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱԻՒ Պ. ԱՐՄԵՆԱԿ ԼԵՒՈՒՆՆԵՆ:

Ի Լօրէնս գումարուած Իաշնակցութեան հրապարակային ժողովին մէջ, ուր պաշտօնապէս հրաւիրուած էր թ խօսելու, ի միջի այլոց՝ Գրագէտ տարա Սուրբ Զօպանեան ալ ամբաստանեց ըրր Սուլթանէս կաշառուած մասնիչ դաւաճան մը:

Արդ, Հայ գրագիրաց պատուոյն նախանձանքով մը ըլլալով՝ կը պահանջէ որ ըսածնիք դրական փաստերով շատանայք. եթէ ձեր այս տարրական պարտականութիւնը կատարել լոյս տաք, ձեր ճակատին վրայ թող մնայ անամօթ և անբողջ գրպարարը իւ արատը:

ԿՐԱՍԵՒ

ՅԱՅՏԱՄԱՒՈՒՐՈՒՆ ՀՆՉ. ԱՅԻ. ՅԵՒ. ԿՈՒՍ. ԼՍՒՆՍՈՒ ՄՍՍՍՏՈՒՐԻՒՂ ԼՕՐԵՆՍ, 20 Յուլիս:

Ամբաստանու առջ կը պարտիրէն Հնչ. ըսկերչ մը կրկնէս մասնաճիւղիս հասցէին զրկուած նամակ մը թղթատան պաշտօնէին մէկ սխալութեան հետևանքով՝ կարգ մը մարդոց կողմանէ կը ըրարցուր (անշուշտ սօկուճան մը ձեռք բերելու ստոր նետեցամտութեամբ): Մասնաճիւղիս բացած քննութիւնները կը շատաանն թէ այդ ստոր դերակատարները եղած են յեղափոխական անուն կրողներ: Կերևի թէ այդ պարտներուն համար գողութիւն և յեղափոխութիւն բաները շամանիչ են:

Տասը անձերու ներկայութեամբ յիշեալ նամակն առնուեցաւ երկուրրիփորթ բնակող Առաքէլ Հ. Սարգիսեան անուն (Արարկերցի) Իաշնակցականի մը ձեռքէն, որը սակայն իր Իաշնակցական ըլլալն ուրացաւ. այս նամակը իրեն զրկուած է Լօրէնսի Իաշնակցականաց ոմանց կողմանէ, որոնց անունը տալու բարոյական քաջութիւնը չունեցաւ:

Այդ պարտը ջանքեր ըրաւ որպէս զի խնդիրը անոյշ տեղը կապենք, բայց Մասնաճիւղս նկատելով որ այս խնդրոյն այդ կերպ փակուած քաջաբերութիւն մը պիտի ըլլայ այդ կարգի կեղծարար անձանձ, յարմար քատեց սոյն երկուող յայտարարութեամբ անգամ մը և՛ այդ գառնազգեստ գայերը իրենց իսկական գոյնովը ճանչցուեն յայ ժողովուրդին (եթէ երբէք ճանչցած չէ):

Ստորագրութիւն ԿԵՐԷ

ՏԵՐ.

Ինչպէս որ ձեր բարեհամբաւ թերթի Յօրէ թւին մէջ մասնաւոր ծանուցմամբ, նոյնպէս ալ նոյն իսկ իր ստորագրութեամբ առանձին ազդով մը տխար Պ. Թորոսեան կը յայտարարէր թէ «Ուէսթ Հոպոքնի հասուկ սրահին մէջ» հայ մանկանց համար դպրոց մը բացած ըլլալով՝ անդուայ բոլոր հայ մանկանց համար հըրաւէր կը կարդար այն տեղ ուսանելու:

Այս առթիւ պարտ անձին կը սեպենք ներկայ պաշտօնական յայտարարութեամբ զալ հրապարակուած անուցանել թէ՛ այս գաղութին ազգային մարմինները յիշեալ խնդրոյ նըկատմամբ ոչ միացած են պըն թորոսեանի հետ և ոչ ալ այն առթիւ որ և է խօսք մը ըրած են, հետևաբար մեզ համար բոլորովին անհասկանալի է իրեն սոյն գործածած «Միացեալ» բառին իմաստն ու նշանակութիւնը:

Կալով տեղւոյս հայ մանկանց համար մայրենի լեզու և ազգային պատմութիւն աւանդելու մասին, ազգային դպրոց մը բանալու համար յանձնարուած արդէն իսկ քանի մը ամիսներէ ի վեր մտադիր և նախաձեռնարկ եղած է և ամեն ջանք իգործ կը դնէ ըստ կարելոյն շուտ վերջացունէլ պայն՝ երբ բարեխորհ հայ անհատներու աշակցութեամբ առ այն պէտք ըլլալիք դրամական միջոցը ձեռք ձգէ:

Ի Իմաց Ուէսթ Հոպոքնի Ազգային Իպրոցի Յանձնարարի: Ատենապետ Վ. ՊԱՍՄԱՃԵԱՆ Մ. ՃԵՆԱՋԵԱՆ Յուլիս 4, Ուէսթ Հոպոքնի:

Ա. Զ. Գ.

Հարգ փուլոցի Ս. Իարթոլովիէսս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կանոնը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 Յրդ Ալիւն 33 և Յօրէ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8 և 10ը:

ՄԻ ՀՐԱՆ. ԽԱՐՔՈՒԹԼԱՆՆ M. Harpootlian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաջաբերակ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած գոհողութիւնը չենք զըլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովողեան և մասնաւորապէս մեր տան անձնօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂՔԱՐԻՒ ԽԱՐՔՈՒԹԼԱՆՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 Օսմ. ոսկույ անշարժ ստացուածք իր սոյն փոխադրի գործոյն երաշխաւորութիւնն է, յաշտ անոնց որոնք կուզեն դրամին վստահելի միջոցով զրկել: Ուստի կը յուսանք թէ Հայ հասարակութիւնը չպիտի վարանի իրեն ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակազիր տալ Սարբերդի, Տիգրանակերտի, Քլէրի, Բալուի, Բերրիի, Մալթիի, Սեպի, Կ. Պոլսի, Կաթնի, Մալթիի քաղաքացի համար. (ինձ դրամ զրկողներն ապահովագրութեան համար՝ Նէշընը Պանթի չէք և կամ մընի օրտըր զրկելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր է գործ տեսնելու կամ գործադրման օգնելու համար՝ պարտաւստ եմ եղբոր Յարուութիւն է՞. ի ձեռամբ կատարել տալ: Հեռագրով և նամակով դրամ և կամ նաւային թիւքէթներ կրնամ զըրկել Մարսիլեայ:

ՊԱՍՄԱՆ

ՏԵՐ.

Ձեր լրագրին 80րդ թիւին մէջ նիւ Հէյվընէն Տ. Յ. ստորագրութեամբ նամակ մը հրատարակուած էր, յորում թղթակիցը ինծի դէմ ինչ ինչ ամբաստանութիւններ առաջ բերած էր: Այս ստորագրութեան տեղը նիւ Հէյվընի մէջ չկրնալով գըտնել, յարգելի խմբագրութեանց տեղեկացայ թէ թղթակիցը լօվէլ ըրնակող պ. Տիգրան Յակոբեանն է, և իրեն ես գրելով հարցուցի թէ պատրաստ է հաստատել իր ամբաստանութիւնները յանձնարումի մը կամ ուրիշ արժանաւոր մարմնոյ մը առջև: Յիշեալը մերժելով այդպիսի մի մարմնոյ առջև իւր պատերը դնել, զիս կը հրաւիրէ լրագրի տպարէզը: Այս տարօրինակ կերակ ինծի, բայց ոչ անմեկեկեկ: Իմ տեղեկութեանս նայելով՝ պարունը երբէք նիւ Հէյվընոտք կոխած չունի. ուրեմն իմ վրայ իր որոշ յարձակումները ըրած է՝ ուրիշներէ լսածներուն համեմատ, եւ եթէ քննութիւն կատարուի, հաւանականօրէն երևան գայ թէ պ. Յակոբեանին տեղեկութիւն տուողներն ալ ուրիշներէն լսածներն պատմեր են, և ասոնք ալ դեռ ուրիշներէ լսած են: Բերնէ բերան երկար ըրլան մը ըրած զրոյցներ են ուրեմն, որոնք պ. թղթակցին այնքան որոշ և համարձակ ամբաստանութիւններուն հիմը կը կազմեն, և այս մեթոտին անպահով և անվստահելի ըլլալը պ. Յակոբեան ինքն ալ այնքան լաւ ըզգացած է, որ իր թղթակցութիւնը թուագրած է ոչ լօվէլէն՝ այլ նիւ Հէյվընէն, որպէս զի իւր տեղեկութեանց աղբիւրը հասարակութեան առջև կասկածելի չերեցնէ: Լօվէլի տեղ եիւ Հէյվըն նշանակել նամակին ըլլալը՝ առաջին սուտն է: Իսեք միւսներուն:

1. Իբրեւ թէ ես, Մկրտական եկեղեցիի նպաստովը հայ աղքատներու համար ապաստանարան մը վարձելով՝ ես և իմ եղբայրներս գործածներ ենք զայն իբրև մեր բնակարանը: — Կը պատասխանեմ թէ այդ տան վարձքը եղբայրներս վճարած են իրենց ճակտի քրտինքով վաստակած ստակէն. միայն առաջին շորս ամիսները երբ եղբայրներս գեռ գործ չէին բոս, վարձքին կէսը վճարուեցաւ Մկրտական եկեղեցիին կողմէ, և այն ալ յանուն Գրիգորեան եղբայրներու, ինչպէս գանձապատին ստորագրութեամբ վաւերագիրը կը հաստատէ: Այն միջոցին ուրիշ Հայ ընտանիքներու բնակարանի վարձքն ալ ըստ մասին այլ և այլ եկեղեցիներու կողմէ հոգացուեցան:

2. Իւր թէ մեր տանը մէջ լուսաւորչական եկեղեցւոյ պատկի արարողութիւնը կատարել և ծաղրելու ենք: — Կը պատասխանեմ թէ երբէք լուս. եկեղեցւոյ պատկի արարողութիւնը կատարած և ծաղրուած չենք, ոչ ես և ոչ ուրիշ ու իցէ մէկը մեր տանը մէջ:

3. Իբրեւ թէ եղբայրս Յովհաննէս ինծի համար հրապարակախօսութիւններ պատրաստեր ու ինձ զըրկել է և ես ալ հաւաքած ստակէս իրեն 500 սողար փոխարէն վարձք տուած ըլլամ: — Երբէք և բնաւ եղբայրս Յովհաննէս ինծի համար ոչ այդպիսի բան գրած է և ոչ վարձատրութիւն ստացած: Պր. Ստեփան Սագուպեան ինձ օգնել է լէքըրներս պատրաստելու և ես ալ անոր վճարում ըրել եմ, բայց հայ աղքատաց համար հաւաքուած ստակէն չէ, այլ իմ անձնական քսակէս:

4. Իր թէ հայ կարօտեալներուն համար հաւաքած դրամները ինծի սեպականած ըլլամ:

Պատասխանս է. — Հայ կարօտե-
րոց համար դրամ հաւաքած եմ. բայց
անձնականիս սեպհականած շեմ
և ոչ սէնթ մը: Այս կարևոր հէտին
վրայ պէտք է սա որոշ տեղեկու-

թիւնները մէջ բերեմ:
Ես Ամերիկա եկայ 1895 Օգոստոս-
սին. այն ատենէն ի վեր Հայ կարօ-
տերոց համար աշխատանքս շորս շըր-
ջանի կը բաժնուի: 1895 Օգոստոսէն
մինչև 1896 մայիս կէսը ինքնազուխ
աշխատեի եմ: 1896 մայիսէն ց1897
յունուար՝ Նէյշընը Արմինիըն Բըլիֆ
Քըմիթիին տնօրինութեան ներքե-
այդ շրջանին մէջ ես այդ կազմա-
կերպութեանէն թողակ կ'ընդունէի, և
լնաւ ստակի հաշիւներուն շէի խառ-
նուի: 1897 յունուարէն մինչև նոյն
տարւոյ սեպտեմբերը՝ կը գործէի
Վուսթըն Գրինուի թէմպլինս Իւ-
նիըն կոչուած ընկերութեան վար-
չութեան տակ, և այդ շրջանին ալ
հաշիւները նոյն ընկերութեան տո-
մարին մէջ արձանագրուած են: 1897
սեպտեմբէրէն մինչև այսօր Նայթք
կարօտի մատակարարութեան ներքե
կաշխա-
տեմ, և հաշիւները անոր ձեռքն են:
Ուստի կը մնայ ինքնազուխ գործած
շրջանիս հաշիւը, որ օր ըստ օրէ կա-
նոնաւորապէս արձանագրուած եմ նոյն
ժամանակի տոմարիս մէջ — թէ ո՞ր
օր և ո՞ր խօսած եմ, ո՞վ է նախա-
գահէր, որքան դրամ հաւաքուած
է, և հաւաքուածը ինծի՞ յանձնուած
է թէ ուղղակի Պրատըն Պրատըրնե-
րուն պանքան յղուած է և թուրքիս
զրկուած: Ահա հաշիւը:

1895 Օգոստոսէն ց96 մայիս Հայ
կարօտերոց համար իմ միջոցովս ե-
ղած հանգանակութիւններն են.

§ 1628.78 տուրս յանձնուած է
ուղղակի ինծի:

§ 1917.38 ինծի յանձնուած շըլ-
լալով՝ ուղղակի թուրքիս յղուած է:

§ 1250.00 հանգանակուած է այն-
պիսի ժողովներու մէջ, որ վերին-
ներուն նման ուղղակի իմ ջանքովս
կազմուած շէին, բայց ես ալ ասե-
նաբաններէն մէկը գտնուած եմ. այդ
դրամներն ալ ինծի յանձնուած շէն:

Ուրեմն գանք ինծի յանձնուած
դրամներու գումարին, այսինքն ա-
ռաջին գումարին, որ է § 1628.78 :
§ 480.00 մր. Կրինի ձեռքով Այն-
թապ ար. Ֆուլըրին յղեցի:

§ 662.56 Պրատի գանձապետ մր.
Վեյնի ձեռքով զրկուեցաւ Այնթապ
ար. Ֆուլըրի:

§ 302.00 իմ ձեռքովս բաշխած
եմ Հայ կարօտեալներու. (65 տուրս
Մարաշ՝ երկու ընտանիքի. § 130 Պոլ-
սէն երկու գաղթականներու ճամբու
ձախք, § 15 Նիւ Եորք Հայ ընտանիքի
մը, § 7 Նիւ Եորք Հայ երիտասարդի
մը, § 25 Ֆիլադելֆիա Հայ երիտա-
սարդի մը, § 40 Թուրքիս դպրոցի
մը շինութեան, § 20 ժողովի մը մէջ
կորուած իրի մը փոխարէն վճարեցի
տիրոջը:

§ 184.22 իմ քաղաքէ քաղաք ու-
ղևորութեանցս, օթէլի և այլ ծախ-
քերս այն ինքն ամսուան շրջանին մէջ:

Գումարն է § 1628.78
Ինծի ինչ մնացած է իբրև արդ-
իւնք 4 տարուան գործունէութեանս.
եթէ զորոյններու հաւատամ, պան-
քային մէջ շատ դրամ ունիմ, բայց
իրողութիւնը այն է թէ սէնթ մը
չունիմ. չունենոր էի առաջ, չունե-
ւոր և հիմա ալ. տկար աղջիկ մըն
էի առաջ հիմա աւելի տկար եմ,
բայց իմ շնչին ու ժիւրուս. տկար մարմ-
նոյ և տկար հոգիի երկու լուսման Տի-
րոջը գանձանակը ձգեցի ինպատ-
տ սիրելի և կարօտ ազգիս. հաշիւս մա-
քուր է և խիղճս հանդարտ:

Նիւ շէվըն Ռեթեյն ԳրիֆորեԱն
Յուսիո 27:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրու-
րին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն
լեզուաւ ամեն տեսակ այցեատմս,
նամակագրութիւն, հրատարակչի, շրջա-
բերականներ, տետրակներ ևն:

Մեր գնեքը գոհացուցիչ են. աը-
պագրութիւնն՝ մաքուր:
Ուրիշ քաղաքներէ եկող յանձ-
նարարութիւնք կը կատարուին փու-
թով ու խնամով:

ԿԸ ՓՆՏՈՒՒԻ

Ներսէս Միսաքեան, Պօլսոյ Սա-
մաթիոյ թաղէն, պանքայի ցոյցին
ջարդէն ետքը Պօլսէնէն փախած եւ
կորուած, մայրը կսկիծէն հիւան-
դացած է. կըսուի թէ սրբույն գըս-
նուելուն լուրը կրնայ գինքը բժշկել.
եթէ այր. Միսաքեան ինքը գրէ ա-
ւելի լաւ, էթէ ոչ գինքը ճանշողնե-
րը հանին տեղեկագրել խմբագրու-
թեանս:

Ն Ո Ր Կ Ե Ա Ն Ք

ՀԱՆԳԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ
ԲԱՂԱՔԱՐԱԿԱՆ

Ամէն անոնք, որ կուզեն ազգա-
յին հին ու նոր կեանքին և յեղափո-
խական անցեալ ու ներկայ ուղղու-
թիւններուն տեղեկի բլլալ, անոնք
որ կուզեն հայկական գեղեցկագոյն
գրիչներէն արտագրուած հմտալից
գրութիւններ և շահեկան երգիծարա-
նութիւններ կարդալ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ
կարդալու են:

Տարեկան բաժանորդագինն է
2 տուրս. վեցամսեայ՝ 1 տուրս:

Նոր կեանքի Նիւ Եորքի գործա-
կալն է Պրն. Անտոն Թագուրեան և
Հասցէն՝

343 Իսթ 34րդ Փողոց:
Նոր կեանքի բաժանորդներուն
«Մարտը ձրի կը զրկուի»:

Յմբագրութեան հասցէն է.
L. FRANK
32 CHESTERTON ROAD
LONDON W. ENGLAND

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր
(Մեր կեանքէն)

Գրեց
Վ. ՇԱՀԷՆԻ

Գինը 15 սէնթ: Բսան օրինակ
գնողին մի օրինակ նուէր կը սրուի:
Գրեմը հեղինակին խմբագրա-
տանս,


V. Schaheni
301 E. 34 th. st.
New York City

ԱԶԳ

Գրիգոր էֆ. Պաղասարեան
վկայեալ և փորձառու փաստաբանը
պատրաստ է ի թիւրքիս թիւրքերէ-
նով հարկ եղածները գրելու ամէն
անոնց որ իրեն կը գրիմեն: Հասցէն է
K. Bagdasarian
936 P. O. Box,
New Britain, Conn-

ՏՕԲԹՈՐ ՇԻՐԻՆԵԱՆ

Տասնութ տարիէ ի վեր իւր
արհեստին մէջ երկար տարիներու
փորձառութիւն ստացած, երեք տարի
չարունակ Պօլսոյ Աղքատախնամին և
գարմանտան այցելու բժիշկ եղած
է, այժմ Նիւ Եորք հաստատուած է,
Առաւօտները ժամը 7—8ը, 500 Իսթ
150րդ փողոցը, Ամսթերտամ աղջիկի
անկիւնը. իսկ կէս օրէ ետք՝ ժամը
5—7 կը գտնուի 212 Իսթ 23րդ փո-
ղոց: Կը դարմանէ ամեն տեսակ ախ-
տեր, կը կատարէ մանկարարական
և վիրաբուժական գործողութիւններ:



Գ Ե Ր Զ Ա Կ
ՅԱԿՈՐ ՈՒՉՈՒՆԵԱՆ

159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան
հանդերձ կը փնտռէք, անանկ չէ՞.
— մենք սուղ կը շինենք — բայց չէ՞.
մեր գործին որքան աժան ըլլալը
ատեն մը գործածուելէն ետքը միայն
կրնաք հասկնալ. անոնք որ իրենց
դրամը անարժէք ապրանքի տուած
ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ
և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին,
անգամ մը մեզի հանդիպելուն հա-
մար ուրախ պիտի ըլլան: Մենք
զուտ անգլխական ապրանք միայն կը
գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարկերին
քառասուն աժան պատրաստի հան-
դերձ ալ կը ծախենք. նաև կը նորո-
գենք, կը մաքրենք, կը ներկենք և
կարգուկենք:

Գիտնալու համար թէ, մենք մեր
հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ
շատ զգալի կերպով վար գին կառ-
նենք, անգամ մը մեզի այցելելը
պիտի բաւէ:

The Equitable Life Ins. Society of the U. S.

«Էքիւթէյալ»

Աշխարհի հզօրագոյն և լաւագոյն
կենաց Ապահովագրական Ընկերու-
թիւնը:

Ամեն Հասակի և վիճակի տէր ան-
ձանց համար ապահովագրի կրտայ,
ի դէպս մահու կամ 15—20—25 տա-
րիէն վճարելի՞ գիծ ուզուի:

Օտար երկիրներէ կամ ներքին ա-
հանգներէն փափաքողը կրնան դիւ-
րաւ թղթակցութեամբ ինքզինքնին
ապահովագրել ապա:

Հրդեհի դէմ ևս կապահովա-
գրեմ:

(Գործակալ)
ԿԱՐԱՅՏ ՊԻՒՐԻՆԵՃԻԿ
164 E. 27th St. New York

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Նիւ Եորք

Հայրենակիցներուն կը ծանուցա-
նեմ թէ Պուլղուրի գործարան մը
հաստատած եմ Ուեսթ Հոպօքընի
մէջ: Մեքենաներս նոր և մաքուր
ցորեն կը գործածեմ, առանց հոտի
և առանց քարի Պուլղուր պատրաս-
տելու համար:

Փոքր քանակութեան համար
գրին է փառնաը 2 1/2 սէնթ:
Հասցէ

A Yazijian
63, Washington St.

որ է Տիար Տիրատուրեանի վարչու-
թեան տակ:

Մեծ քանակութեամբ գնողնե-
րուն կարևոր գեղը կընեմ:

Գործարանիս հասցէն է՝
E. K. Mano
226 232 Clinton St.
Hobocen N, J,

Լ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Ի Չ
ՏԻԳՐԱՆ Ճ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Elite photo Studio
182 Main Street, Paterson, N. J.

Պատու ունիմ ծանուցանելու Հայ
հասարակութեան թէ՛ յաջողած եմ
ճոխ և առաջնակարգ լուսանկարչա-
տուն մը հաստատել Փէթրսըրի մէջ
ուր կը շրաւիբեմ հայրենակիցներս
իրենց լուսանկարները հանել տալու,
խիստ շափաւոր գներով: Երկար տա-
րիներու փորձառութիւն ունիմ ար-
հեստիս բոլոր ճիւղերուն մէջ: պատ-
կեր մեծցունել, ընդօրինակել, շրջա-
նակ շինել և այլն:

Նիւ Եորքէն ու Նիւ Ճորձիէն Լկող-
ներուն ծամբու ամսերու գինը ես
կը վճարեմ:

Կը յուսամ թէ շատ հայրենակից-
ներ թէ շափաւոր գներով խիստ գոհա-
ցուցիչ լուսանկարներ ունենալու թէ
ամառային զուարճողի ճամբորդու-
թիւն մը րնելու և թէ մեզ քաջալու-
րելու համար պիտի գլխին մեզ:

Քոյս կը ծախուին Հայրիկի, Իգ-
միլիանի և Մայր Հայաստանի լուսա-
նկարները:


Մանրամասնութեանց համար դի-
մել ինձ նամակաւ կամ անձամբ:

Ս. ՏԱՄԿԱՐԻՃԵԱՆ
ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

509 2րդ Ալեքս, 28 և 29րդ Փողոց:

Եթէ տարիներէ ի վեր հաստա-
տած խանութիս մէջ գտած յար-
դութիւնովս կարող եմ շատ լաւ ապ-
րանքներ տալ շատ աժան գներով՝ հա-
մոզուած ըլլալով թէ՛ սպասուով շա-
հին գլխաւոր միջոցն է յաճախողը
գոհ ընել: Եթէ մեր ապրանքները
գոհացուցիչ չըլլան՝ վճարուած դը-
րամը ետ կը դարձունենք: Մեր քով
կը գտնուին ամեն տեսակ բանալի-
ղէններ, պտուղներ ու կրակուրի
վերարեւել տեղակալ կամ Արեւի-
կան ամեն կարգի նիւթեր, թիթեկ-
եայ սուսփերով կամ սուսփ սուսփի:
Մեր գներու մասին հետեւեալ նմոյշ-
ները կուտանք: Պուլղուր փառնաը
4 սէնթ. 25 փառնալն աւելի դեւ-
ղին համար 3 1/2 սէնթ: Ենած փառնա-
տը 4 սէնթ, զէյթուն 10 սէնթ, 10
փառնալն աւելի գնողին համար 9
սէնթ: Մաքուր ալիւրի հայցին մէկը
3 և երկուքը 5 սէնթ: Կաթ քորթը
3 սէնթ: Հայկական զէյթունի իւղ,
կորկոս, կանանչ զէյթուն, պամեայ,
Ֆըստրիս, լէպլէպի, Այնթէպ հալլա-
սի ևն. կը վաճառենք. մեծ քանա-
կութեամբ գնողներուն կարևոր գեղը
ընելով:

Նամակով յանձնարարութեան
համար դիմել վերոյիշեալ հասցէին:



Պերլինի համալա-
րանէն վկայեալ՝ Տըթըր.
Էֆիլ պատրաստ է ա-
մենազօրաւոր մասնա-
ւորապէս գաղանի կոչ-
ու ծախսերը բժշկելու:
Կատարելապէս չը
բուժուող հիւանդին դրամը ետ կը
սրուի: Շատ մը հայեր մեծ գոհա-
ցում գտնի են իրմէ: Հայոց համար
վճարները շատ շափաւոր են: Օֆիսը
503 Երդ. Ալըրիւ 52րդ. փողոցի ան-
կիւնն է: Առաւօտեան ժամը 9էն ի-
րկուսուան 5ը, իսկ կիրակիները՝ 9էն
12 օֆիսը կը գտնուի: 4—12

Ա. Չ. Դ

Հայրենիք վերադառնալու հա-
մար, պուլղուրի ընկերութեան Հեւ
ուրեցած յարաբերութիւնս կը դադ-
րի. ուստի ալ ևս իմ անունովս ըն-
կերութեան գրելու չէ երբէք, այլ
ուղղակի Պուլղուր Մանիֆաքըրինկ
Քըմիթիին գրելու է Ուսթըր:

ՄԱՆՈՒԿ ԹԱՄԱՐԵԱՆ